

Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ. «ՀԱՅ ԳՐԻ ԵՎ ԳՐԶՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 415

Հնագրությունը մի գիտություն է, որի հիմնական նպատակն է որոշել գրի ժամանակը: Զարգացման հետագա ընթացքում այն դուրս է գալիս իր նեղ կիրառական շրջանակներից, գրերը ուսումնասիրվում են որպես մշակույթի մի ինքնուրույն արտահայտություն, և հնագրությունը, շկորցնելով իր գործնական բնույթը, յուրացնում է տեսական գիտությունների հատուկ դժեր:

Մեզ հասած հաղարավոր հայերեն գրչագրերի զգալի մասը թվակիր է, և թերևս այդ է պատճառը, որ հնագրությունը պատշաճ տեղ չի գտել հայագիտության բազմաճյուղ բնագավառում: Եվ իրոք, հին հայագիտությունից մենք ժառանգել ենք փաստորեն երկու աշխատություն, որոնք կարող են դիտվել որպես հնագրական, այն է՝ Հակոբ Տաշյանի «Աեկնարկ մը հայ հնագրության վրա», Վիեննա, 1898, և Կարեգին Հովսեփյանի «Գրչության արվեստը հին հայոց մեջ» («Շողակաթ»), Վաղարշապատ, 1913, նաև առանձին հրատարակություն): Հետագայում լույս տեսած աշխատությունները՝ բառիս բուն իմաստով հնագրական ուսումնասիրություններ համարվել չեն կարող: Ուստի ինքնին պարզ է, որ գրախոսվող գիրքը ընթերցողը բաց կանի մեծ ակնկալումներով:

Գրախոսվող գիրքը բաղկացած է ներածությունից, 16 գլխից, տպագիր և անտիպ ձևագրացուցակների ցանկից, ապա՝ տեղանունների և անձնանունների ցանկից, ունի բազմաթիվ գույնավոր և սև նկարներ, որոնք ընդհանրապես չաջող կերպով կապվում են շարադրանքին:

Ուսումնասիրության առարկան բնութագրելիս հեղինակը ասում է, որ հնագրության գերն է՝ «Սղենի ուսումնասիրողներին գրավոր սկզբնաղբյուրները ճիշտ վերծանելու գործում» (էջ 6), «...պարզել ուսումնասիրության ենթակա ձևագրերի, վավերագրերի կամ վիմագիր արձանագրությունների հարապատությունը և նրանց ժամանակը» (էջ 11). «...համեմատական ուսումնասիրության հիման վրա վերականգնել ձևագրերի ընդօրինակման ժամանակ բնագրերում թույլ տված աղավաղումները», (էջ 12): Հնագրության բաղկացուցիչ ճյուղերն են՝ գրամագիտությունը, վիմագրությունը, գրչագրությունը (որը ուսումնասիրում է ձևագիր գրությունները), վավերագրությունը և կնքագիտությունը: Մեզ ընկած է, որ այս բնորոշումը, անհաջող է: Այժմ հնագրությունը գիտվում է որպես օժանդակ մի գիտություն, որը ուսումնասիրում է գրատեսակների ծագումը, զարգացումը և ժամանակը, ընդ որում փոքր բացառությամբ ընդգրկում է միայն փափուկ նյութի՝ պապիրուսի, մազաղաթի, թղթի վրա եղած գրությունները: Վիմագրությունը, կնքագիտությունը և այլն այժմ գիտվում են որպես առանձին գիտություններ, ի դեպ, կնքագիտությունը զբաղվում է վավերագրից կախվող արձիճի կամ մոմի բուն կնիքներով, իսկ հայերեն ձևագրերի կամ

¹ Օրինակ, Տ. Ա. ճ ա ս յ ա ն, Հայոց գրերը, Վիեննա, 1928, և Ղ ա Ֆ ա զ ա ր յ ա ն — Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939:

վավերագրերի վրա եղած գրողները վերաբերում են ավելի շուտ դիպլոմատիկային: Վերջապես բնագրերի վերականգնման հարցերով զբաղվում է տեքստաբանությունը, որը կապված լինելով հնագրությանը, այնուամենայնիվ առանձին մի գիտություն է: Այսպիսով, հնագրության ասպարեզն այն է, ինչ որ հեղինակը բնութագրում է որպես գրչագրություն, մի տերմին, որը բնավ չի նպաստում առարկայի բովանդակության պարզեցմանը:

Գրախոսվող աշխատության առաջին գլխում հեղինակը խոսում է Հայաստանում գտնված «էթապատկեր» գրությունների, «մեհենական» կոչվող գրքեր, հեթիթ գրերի, սեպագրերի, արամեատառ, հունարեն և լատիներեն արձանագրությունների մասին: Այս գլուխը ընթերցողին համոզում է, որ Մեսրոպյան գրերից առաջ Հայաստանում եղել են բազմազան գրեր, և հայերեն այբուբենի հորինմանը նախորդել է համեմատաբար հարուստ գրային մշակույթ: Բովանդակությամբ այդ գլխին է հարում նաև հաջորդը՝ «Հնագույն տվյալներ նախամեսրոպյան հայ գրի և գրականության մասին» գլուխը: Այստեղ հեղինակը մանրամասն հիմնավորում է այն դրույթը, որ Մաշտոցից առաջ Հայաստանում գոյություն է ունեցել հայ գիր և գրականություն: Հեռու լինելով հեղինակի բուն թեզը հերքելու նպատակից, պիտի նշենք սակայն, որ Ա. Արբահամյանի առաջադրությունները երբեմն թվում են անհամոզեցուցիչ: Այսպես, հեղինակը հիշեցնում է, որ հայերը հին պետականություն ունեցող ժողովուրդ են, և Արտաշեսյան շրջանում հելլենիստական մշակույթը իր վերելքի շրջանն է ապրել: Ա. Արբահամյանի համար դա մի կողմն է իր տեսակետը ապացուցելու համար (էջ 36), մինչդեռ երևույթների կապը ընթերցողին մնում է անհասկանալի: Մի այլ օրինակ. հեղինակը վկայակոչում է Մովսես Խորենացու այն հատվածը, ուր ասված է, որ պատմագիր Բարգածանը Գարանաղյաց Անիում թարգմանում է ասորերենից մի մեհենական պատմություն. նույն այդ երկի հունարեն թարգմանությունից օգտվել է պատմահայրը: «Չորրորդ դարում, — եզրակացնում է Ա. Արբահամյանը, — օտար լեզուներից Հայաստանում քաղաքացիություն ունեին հունարենը և ասորերենը, և թե Բարգածանի արտագրածը ոչ ասորերենը և ոչ հունարենը (այսինքն թարգմանության լեզուն չէր կարող լինել ոչ ասորերենը և ոչ հունարենը — Կ. Յ.), ապա մնում է ենթադրել, որ նա գրված պետք է լիներ տեղական լեզվով՝ հայերեն» (էջ 37): Նախ՝ Բարգածանը այդ պատմությունը թարգմանել է ոչ թե չորրորդ, այլ երկրորդ դարում, ինչպես մի րանի տող վերև ընդունում է և Ա. Արբահամյանը (ավելի ճիշտ II—III դդ.), իսկ այդ շրջանում մեհենական պատմության նախագագափարը ամենայն հավանականությամբ կարող էր լինել պարսկերեն:

Ամփոփելով գլուխը, հեղինակը հայտնում է, որ Մաշտոցից առաջ հեթանոսական շրջանում գոյություն է ունեցել մեհենական գիր և գրականություն, իսկ քրիստոնեական շրջանում օգտագործել են հունարեն և ասորերեն տառանիշեր (էջ 46):

Մի ամբողջ գլուխ Ա. Արբահամյանը նվիրել է հայկական գրերի ստեղծմանը: Շարադրելով Մաշտոցի կյանքը, հեղինակը իրավացիորեն պնդում է, որ երևի հիմնական սկզբնաղբյուրները՝ Կորյունը, Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին՝ լրացնում են միմյանց և ոչ մի հիմք չկա թերագնահատելու

² Մովսեսի Խորենացուց Գառմուքին Հայոց, աշխատությամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 201—202:

մեկը հօգուտ մյուսի: Ապա Ա. Աբրահամյանը կանգ է առնում Մաշտոցի սոցիալական ծագման հարցի վրա և հերքելով «ծայրահեղ» կարծիքները հաստատապես պնդում է, որ «Մաշտոցը եղել է աշխատավոր գյուղացու որդի» (էջ 49): Պիտի խոստովանենք, որ հայտնած կարծիքը ևս ծայրահեղություն է: Մաշտոցի ծննդավայրը, Հացեկաց գյուղը, Փալստոսը անվանում է «կարճազատների» գյուղ, և Ա. Աբրահամյանի կարծիքով «կարճազատ» այստեղ նշանակում է «սահմանափակ ազատություն ունեցող» (էջ 48): Ընդունելով անգամ նման մեկնաբանությունը, պիտի ասենք, որ բացի կարճազատներից գյուղում կարող էին բնակվել նաև այլ հասարակական շերտերի ներկայացուցիչներ: Ուստի յժվար է որոշակիորեն ասել, թե ինչպիսի ընտանիքում է ծնվել Մաշտոցը:

Մի շարք այլ հեղինակների նման ընդունելով, որ Մաշտոցը ծնվել է 361—364 թթ. հեղինակը շարադրում է նրա կյանքը և հասնում է գրերի ստեղծման նշանավոր ժամանակին: Սակայն նախքան այդ հարցին անդրադառնալը, ստիպված ենք կանգ առնելու առարկություն առաջացնող մի կետի վրա: Ա. Աբրահամյանը, հետևելով Ն. Ադոնցին, ընդունում է, որ Փոտ պատրիարքի «Գրագարան» կոչվող աշխատության մեջ *μαχτούσιος* անվան տակ հիշատակվում է Մեսրոպ Մաշտոցը: 391/2 թ. Թեոդորոս Մոսսուեստացին «քորեպիսկոպոս», Մաշտոցի համար մի գիրք է գրում: Մեզ հայտնի է, եզրակացնում է Ա. Աբրահամյանը, որ Մաշտոցը քորեպիսկոպոսի կոչում է ստացել 391/2 թ., իսկ Թեոդորոսը քահանայության աստիճանում մնացել է մինչև 383 թ., այնուհետև դառել է Մոսսուեստի եպիսկոպոս, հետևապես, պնդում է հեղինակը, այդ տեղի պիտի ունեցած լիներ 391/2 թվականին: Նախ՝ Մաշտոցի քորեպիսկոպոս լինելու մասին «մեզ հայտնի է» միայն նույն Փոտից: Եվ երկրորդ՝ ինչպես է կարողանում երեց (ինչպես ասված է հունարեն բնագրում) Թեոդորոսը գրել իր գիրքը 391/2 թ., երբ արդեն 383 թ. հետ նա, Ա. Աբրահամյանի պնդումով, դառել էր եպիսկոպոս: Իրական պատկերը միանգամայն այլ է: Երեց Թեոդորոսը մի գիրք է գրում պարսից մոգության մասին, որը ձոնում կամ ուղղում է Մաշտոցին, «հայ քորեպիսկոպոսին»: Քանի որ Թեոդորոսը երեց էր 383—392 թթ., ապա կարելի է ենթադրել, որ այդ ժամանակամիջոցում Մաշտոցը դառել էր քորեպիսկոպոս: Առաջին անգամ այդ տեղեկության վրա ուշադրություն էր դարձրել Ն. Ադոնցը և հետևյալը, որ հենց այդ ժամանակամիջոցում է Մաշտոցը ստեղծել հայոց նշանագրերը:

Ա. Աբրահամյանը համառոտակի կանգ է առնում գրերի ստեղծման ժամանակի վերաբերյալ կարծիքների վրա և հարում է ներսես Ակինյանի մտքին, որը գրերի գյուտի ժամանակը համարում է 406—407 թթ.: Հայաստան էին բերվել գրերը 407—408 թթ. (էջ 54—55):

Նպատակ շունենալով սույն գրախոսականում պաշտպանելու այս կամ այն տեսակետը, մենք կարծում ենք սակայն, որ աշխատության ծավալը միանգամայն կներեր, եթե Ա. Աբրահամյանը ավելի մանրամասն կանգ առներ այդ դժվարին պրոբլեմի վրա: Ն. Ակինյանի ուսումնասիրությունից հետո լույս է աեսել ակադ. Մանանդյանի հետմահյան մի հոգվածը⁴, որտեղ բազմապատ-

³ Sbe, Migne, Patrologia graeca, t. 103, col. 281. Ն. Ադոնց, Անձանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների մասին բոս ստար աղբյուրների «Հանգես Ամսօրյա», 1923, էջ 193—195:

⁴ Հ. Մանանդյան, Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը: Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հաս. գիտ. 1953, № 7:

տակ զհիտնականը վերանայելով իր 1941 թ. լույս տեսած աշխատությունը⁵, նոր փաստերով հիմնավորում է ժամանակին հայտնած իր կարծիքը: Ա. Արրահամյանին այդ աշխատությունը մնացել է ըստ երևույթին անհայտ, հակառակ զեպքում նա թերևս ավելի հանգամանորեն կանգ կառներ հանգուցյալ զիտնականի ծանրակշիռ փաստերի վրա, որոնք վկայում են, որ հայ գրերի գյուտը եղել է 392 թ.:

Այնուհետև հեղինակը կանգ է առնում մի այլ կարևոր հարցի վրա՝ արդյոք ո՞ր այբուբենն է ատաղձ ծառայել հայկական գրերը ձևելու համար: Ա. Արրահամյանը սլաշտույանում է իր հին կարծիքը, որի համաձայն հայոց այբուբենը կազմված է երկու շերտից. 24 տառանիշ զալիս ևն Դանիելյան գրերից, իսկ 12 Մաշտոցի լրացրած տառերն են: Իսկ Դանիել Ասորին, շարունակում է հեղինակը, իր այբուբենը կազմել էր հունականի օրինակով՝ սկզբունք ունենալով ձևափոխել հունարեն տառերը:

Թե Դանիելյան նշանագրերը որչափ ևն նպաստել հայոց այբուբենին՝ դժվար է ասել, սակայն ոչ մի կերպ չի կարելի համաձայնել այն մտքին, թե իրր Դանիելյան նշանագրերի շարքում կային ա, ե, է, ի, ո ձայնավորները (տես էջ 61): Դանիելյան նշանագրերը անտարակույս արամեական բնույթ էին կրում, այսինքն ձայնավորների հատուկ նիշեր չունեին: Այդ է ակնարկում Կորյունը՝ գրելով, որ ասորի եպիսկոպոսի գրերը չէին արտահայտում հայերենի վանկային կազմը՝ «չեն բառական... ողջ ածել զսիդորայս՝ զկասս հայերեն լեզույս»⁶: Ուստի եթե այդ նշանագրերը անգամ յուրացված են եղել, ապա հիմք են ծառայել միայն բաղաձայնների համար:

Ա. Արրահամյանը փորձ է կատարում համեմատել V դարի հունարեն տառերը և «V դարի հին հայկական տառերը»: Անթերցողին մնում է անհասկանալի՝ ինչու բերված ձևերը զալիս ևն V դարից: 86—88 էջերում հեղինակը զետեղել է տառանիշերի համեմատական աղյուսակ, որի երկրորդ սյունակը կազմում են V—VI դդ. սլաշտույանի տառաձևերը: Արդ, եթե բաղաձայնային այդ ձևերը հունարենին կից գրված տառերի հետ, ապա կտեսնենք, որ տարբերությունը մեծ է: Բաժանական է համեմատել Վ-ն կամ հարևան շարքերի Ծ-ն (թե սլաշտույանի իրոք V—VI դդ. է՝ այդ հարցի վրա այժմ կանգ չենք առնում): Որոշ տառաձևեր անտարակույս զալիս ևն հունարենից՝ Բ, Թ, Փ, Բայց երբ հեղինակը կասում է Յ տառը հունարեն ω տառի հետ, այնպեսով որ վերջինս «նստեցված է», հունարեն γ գտնում է հայերեն Գ, շնորհիվ այն հանգամանքի, որ «առջևից կյոր է ավելացված», կամ հունարեն τ «վերին ձախ թևը կտրվում, ավելացվում վերևից» և այդ նշանապարհով ստեղծվում հայերեն Տ-ն, երբ վերջապես Ջ ձևվում է հունարեն կոպսյայի հիման վրա, որը որպես տառանիշ զաղարել էր իր գոյությունը Մաշտոցից մոտ 1000 տարի առաջ, երբ հայերեն է-ն, որը ն՝ ձևով, ն՝ բովանդակությամբ հավասար է եյ երկբարբառի, իսկ Ա. Արրահամյանը սերում է այն հունարեն γ -ից, ապա ստույգ զիտությունը դիջում է իր ակզը լուկ երևակայության:

Հայերեն գրերի տեսակներին և նրանց դործածության ժամանակին նվիրված զլուխը կազմում է աշխատության թերևս ամենակարևոր մասը: Հայոց հին գրերը հեղինակը բաժանում է հինգ (վեց— Կ. Յ.) տեսակների՝ րուն մեսրո-

⁵ Я. А. Манандян, Месроп Маштоц и борьба армянского народа за культуру и самобытность, Ереван, 1941.

⁶ Կորյուն, Վարդ Մաշտոցի, հրատարակ. Մ. Արևիկյանի, Երևան, 1951, էջ 46:

այլան Երկաթագիր, միջին մեսրոպյան երկաթագիր, ուղղանկյուն երկաթագիր, բոլորապիր, նոտրպիր, շղագիր. հնագույն տառատեսակները՝ մեսրոպյան կամ բոլորածե երկաթագիրն է և միջին մեսրոպյան երկաթագիրը (էջ 70): Նկարապրելով սակայն մեսրոպյան երկաթագրի առանձնահատկությունները, հեղինակը կարծես մոռանում է իր առաջարկած երեք ենթաբաժանումների մրտրից և խոսում է միայն բոլորգիծ մեսրոպյան և ուղղանկյուն երկաթագրի մասին: Աեկ տեղ միայն ասված է, որ ԼԲԼ բոլորգիծ մեսրոպյանը հիմնական պիր է հանդիսացել V—X դդ., ապա մեսրոպյան գրերը օգտագործվում են պատմագիտական ձեռագրերում և ավետարաններում V—XII դդ. (էջ 96): Ընթերցողը այսպիսով, պիտի գուշակի, թե ինչ տարբերություն է եղել այդ երկու գրատեսակների միջև: Գալով հարցի էությունը պիտի ասենք, որ իրապես երկաթագիրը ունեցել է ընդամենը երկու ենթատեսակ, որոնցից առաջինը կարելի է անվանել բուն մեսրոպյան, իսկ երկրորդը միջին կամ ուղղանկյուն երկաթագիր: Այդ բաժանումը ընդունված է գրականության մեջ և ծածկում է զրբերի կառուցվածի առանձնահատկությունները: Եթե հեղինակը ընդուներ այդ տեսակետը, ապա շարագրությունը (տես հատկապես էջ 96) զբոծ կլիներ թերևս տիրող անորոշությունից:

Անորոշ է նաև մեսրոպյան գրի ընդհանուր պատկերը: Այսպես, մի ամուղ էջ Ա. Աբրահամյանը նվիրում է կազարյան ավետարանի (887) ուղղագրական առանձնահատկություններին, մի երևույթ, որը բնավ չի կապվում տառատեսակի հետ (էջ 72): Հեղինակը միաժամանակ աչքաթող է անում մի հատկություն, որը սկզբունքորեն տարբերում է երկաթագիրը հայոց մյուս գրերից, այն է՝ երկաթագիր տառերը, փ-ի և ք-ի բացառությամբ, տեղավորվում են երկու տողի արանքում, այս է երկաթագրի ամենակարևոր առանձնահատկությունը:

Ինչպես ասացինք, հնագրության կարևորագույն խնդիրներից մեկն է որոշել գրերի ժամանակը: Դժբախտաբար ո՛չ Ա. Աբրահամյանին և ո՛չ էլ նրա նախորդներին այս հարցի լուծումը բավարար չափով ղեռնա չի հաջողվել: Ընթերցողը իրավացիորեն կարող է կասկածել, իրոք Հ. Աճառյանի և Կ. Ղաֆայարյանի ուսումնասիրած պատառիկը կամ Պետական Մատենադարանի № 1577 ձեռագրի պահպանակը գալիս են V դարից: Ինքը հեղինակը, բազմաթիվ մեջբերումներ անելով վիմագիր արձանագրություններից, նկարապրելով երկաթագիր յուրաքանչյուր տառանիշը, ստիպված է խոստովանելու, որ նյութը թույլ չի տալիս ավելի ստույգ ձևով լուծելու ժամանակի հարցը: Միանգամայն ընդունելով պրոբլեմի դժվարությունը, կարծում ենք, որ նախապես պիտի գրվի համեմատաբար ավելի թեթև խնդիր՝ փորձել որոշել գրերի համեմատական ժամանակը, բաղդատելով հնագույն թվակիր ձեռագրի, լազարյան ավետարանի հետ: Եթե մենք ի վիճակի լինենք ավագուցելու, որ այս կամ այն պատառիկը ավելի հին է, քան կազարյան ավետարանը, ապա դա կլինի խոշոր նվաճում:

Անորոշություն է տիրում նաև բոլորագրի բնութագրման հարցում (էջ 96—103): Ա. Աբրահամյանը գտնում է, որ XII դարից գրչության մեջ բեկում է առաջանում ուղղագիծ երկաթագիրը տեղի է տալիս բոլորագրին: Հենվելով Գ. Հովսեփյանի կարծիքի վրա, հեղինակը գտնում է, որ այդ ժամանակվանից կարելի է գատել բոլորագրի երկու տեսակ՝ կիլիկյան և արևելյան: Բոլորագիրը սկսում է իշխել XIII դ., սակայն առանձին նմուշներ վերաբերում են X դ. մնութագրելով բոլորագիրը, հեղինակը նկատում է, որ այն մի քանի անգամ

փոքր է բոլորածե երկաթագրից, և ոչ թե նկարվում, այլ գրվում է: «Կիրիկյան բոլորագիրն ունի ճիշտ «Կորպուս» կոչվող գրի ձևը, ինչ որ ներկայումս գործ է ածվում մեր տպագրության մեջ, իսկ արևելյան բոլորագիրը նրանից քիչ տարբերվում է տառերի խոշորությունը և մի քանի տառանիշերով՝ շ, շ, ձ, ջ և այլն» (էջ 98):

Այն հանգամանքը, որ բոլորագիրն շատ մոտ է մեր ներկայիս տպագիրը, չի ազատում հեղինակին այդ գրատեսակի նկարագրությունից, եթե Ա. Արրահամյանը նշեր, որ բոլորագիրը ի տարբերություն երկաթագրից ձգտում է տեղավորվել շորս տողի մեջ և գրվում է որոշ թեքությամբ, ապա ընթերցողը իսկույն կպատկերացներ այդ գրի առանձնահատկությունները: Թվում է, որ այդպիսի նկարագրության տեղը հենց հնագրության հարցերին նվիրված աշխատությունն է:

Ա. Արրահամյանը իր շարագրության մեջ ցույց չի տալիս, թե ինչ զարգացում արեց բոլորագիրը դարերի ընթացքում: Մինչդեռ, բոլորագրի ժամանակի որոշումը ավելի դյուրին է, քան երկաթագրի: Մեզ են հասել բազմաթիվ թվակիր ձեռագրեր, որոնց ուսումնասիրությունը կտա հաջող արդյունքներ: Մեզ թվում է, որ Ա. Արրահամյանը չպիտի բավարարվեր բոլորագրի 5 սյունակով (էջ 107—108), այլ պետք է ավելի հանգամանորեն կանգ առներ այդ կարևորագույն հարցի վրա:

Հաջորդ էջերում հեղինակը համառոտակի խոսում է նոտագրի մասին, որը իշխող գրատեսակ է դառնում XVII—XVIII դդ. (էջ 105) և մի քանի տող էլ նվիրում է շղագրին: Ափսոս, որ 107—108 էջերում ղետեղված աղյուսակում Ա. Արրահամյանը չի նշում, թե որտեղից է քաղել «XVIII դ. շղագրի» նմուշները, որոնք հար և նման են առաջին դասարանում դասավանդվող տառերին:

Աշխատության հաջորդ գլուխները անհամեմատ բովանդակալից են, քան գրքի առաջին մասը: Ա. Արրահամյանը հանդամանորեն կանգ է առնում համառոտագրության (էջ 110—128). թվանշանների գործածության (էջ 129—138), գաղափարագրության հարցերի վրա: Գաղափարագրությանը նվիրված VII գլուխը պարունակում է ձեռագրերից քաղված հարուստ նյութ և մեծապես կնպաստի զրազիր բնագրերում եղած գաղափարագրերի վերծանմանը: Ցավալի է, որ նկարագրելով և մեկնաբանելով որոշ նշաններ, հեղինակը չի խուսափում զուհակացումից: Գաղափարագրերի մի մասը արտահայտում է բառի բնորոշ իմաստը, պնդում է Ա. Արրահամյանը 158 էջում, և փորձում է համոզել ընթերցողին, որ իրար վրա բարձրացող օղակներ նշանի և փառասէր բառի միջև գոյություն ունի ինչ որ ներքին, իմաստային կապ: Նույն տեղում Ա. Արրահամյանը այդպիսի կապ է նշմարում կարճ ճանկերով գլուխ ունեցող նշանի և մեղավոր բառի միջև: Մյուս կողմից, այն դեպքում, երբ այդ կապը բացահայտ է, հեղինակը հրաժարվում է նշանների իմաստավորումից: Այսպես, կռապաշտ նշանը (էջ 159), կարող է գիտվել որպես ատրուշանի երևակայական վերարտագրություն:

Հեղինակը մեծ տեղ է նվիրել կետագրության և առոգանության նշաններին (էջ 174—183), մասնավորապես՝ հայկական ծածկագրությանը (էջ 186—242): Այդ գլուխը (IX) զրախոսվող գրքի ամենահետաքրքիր մասերից է, և նրա թարմությունը նպաստել է թերևս այն հանգամանքը, որ Ա. Արրահամյանը խորսխվում է իր սեփական հետազոտությունների վրա: Մեծ հետաքրքրություն կղիմի ընթերցողը նաև հաջորդ գլխին, որը նվիրված է տարեթվերի, ամսաթվե-

րի և օրերի հաշվումներին (էջ 243—300) և ունի գործնական և մասամբ էջ տեսական արժեք, շնայած զերծ չէ վիճելի դրույթներից: Գրախոսվող աշխատության վերջին մասը նվիրված է փակագրությանը (էջ 301—311), պարզանկարչությանը և դարձագրությանը (էջ 312—337), գրանյութին և գրենական պիտույքներին (էջ 338—355). գրչագրերում եղած աղավաղումներին և յղճատումներին (էջ 356—366), դրչագրությանը (էջ 367—392): Տասնհինգերորդ զլխում Ա. Աբրահամյանը խոսում է միջնադարյան գրիչների կյանքի, նրանց աշխատանքի պայմանների մասին և այլն: Սակայն այդ ընդհանուր առմամբ շատ հաջող զլխում կա մի դրույթ, որը խիստ աուարկություններ է առաջացնում: Այսպես, 369 էջում հեղինակը նկատում է, որ գրիչները իրենց անունները հիշում են որևէ նվաստացուցիչ մակդիրով՝ ապիկար, տխմար, փծուն, և այլն, և այդ երևույթը դիտում իբրև գրիչների «ծայր աստիճան աշխատասիրության և համեստության» արդյունք: Հանրահայտ է, որ նշված երևույթը կապված է միջնադարին հատուկ ինքնանվաստացման տրամադրության հետ, երբ մեղսասեր էակը ամբողջությամբ նվիրվում է անձնատյացության գաղափարին: Նույն զլխում հեղինակը խոսում է հիշատակարանների և գրչագրերում հանդիպող կտակ-հանձնարարությունների մասին:

Վերջին, տասնվեցերորդ զլուխը նվիրված է ձեռագրերի գիտական նկարագրությանը, (էջ 393—397): Ա. Աբրահամյանը հայտնում է, որ գիտական նկարագրությունը լինում է համառոտ և ընդարձակ: Այնուհետև Ա. Աբրահամյանը մանրամասն թվարկում է, թե ինչ է հասկանում նա ընդարձակ նկարագրություն ասելով: Նկարագրողը պիտի նշի ձեռագրի սեփականատիրոջ անունը և գրչագրի համարը, հաշվի թեթևությունը, պրակները, մեծությունը, տեղեկություններ հայտնի գրչի և կաղմողի մասին, և այլն, և այլն: Իսկ բովանդակությունը. այդ հարցը նկարագրողին չի դբաղեցնում. նա բավարարվում է նրանով, որ հարապատությանը արտագրում է վերնագրերը և առաջին ու վերջին տողերը: Եթե նկարագրողը պատասխանի միայն նշված հարցերին, ապա դա կլինի դրչագրի արտաքին, եթե կուղեք՝ բիրյիոգրաֆիկ նկարագրություն: Մինչդեռ գիտական նկարագրության կարևորագույն խնդիրն է՝ բնագրի նույնացումը: Պիտի պարզվի այս կամ այն բնագիրը հրատարակված է թե ոչ, եթե հրատարակված չէ, ասլա ինչ անվան տակ է հայտնի գիտության մեջ. և եթե բոլորովին անհայտ է, ասլա ինչ է բովանդակում տվյալ աշխատությունը, ում գրչին է պատկանում. երբ է գրվել, եթե թարգմանություն է, ասլա ինչից է թարգմանվել, և այլն, և այլն: Այդ հարցերի պատասխանը միայն հնարավորություն կտա ընթերցողին պատկերացնելու, թե ինչ բնագիր է թաքնվում այս կամ այն խորագրի տակ: Մի խոսքով, նկարագրողը պիտի նույնացնի տվյալ բնագիրը այս կամ այն հուշարձանի հետ, կամ հանի այն հայտնի երկերի ցանկից:

Հաճախակի արդեն վերնագիրը կամ սկզբի տողերը կարող են հուշել պատասխանը, բայց այդ վերաբերում է հանրածանոթ բնագրերին: Մինչդեռ ձեռագրերը նկարագրելիս հանդիպում են բազմաթիվ մոռացված աշխատությունների, որոնց վերնագիրը միայն ոչնչով չի օգնի ձեռագրացուցակի ընթերցողին: Առառավել դա վերաբերում է թերի օրինակներին: Ավելացնենք նաև, որ նկարագրողը պարտավոր է նշել տվյալ գրչագիր մատյանին կամ պատահիկին նվիրված աշխատությունները, այսինքն կաղմի ձեռագրի բիրյիոգրաֆիան:

Այդպիսի մոտեցման շնորհիվ է, որ Հ. Տաշյանի «Մայր ցուցակը» մինչև այժմ մնում է որպես անզերազանցելի մի գործ:

Մենք փորձեցինք որոշ շափով վերլուծել գրախոսվող աշխատության բովանդակությունը, ըստ որում ներկա հոդվածի սահմանափակ ծավալը հնարավորություն չի տալիս ավելի հանդամանորեն անդրադառնալու գրքում բնարկվող մյուս հարցերին: Մնում է մի քանի խոսք ասել աշխատության գիտական ճակատման մասին:

Ներգրավված գրականության ցուցակը կարող էր լինել ավելի հարուստ: Ինչպես ասվեց, Ա. Արրահամյանին մնացել է անծանոթ, օրինակ, Հ. Սանանդյանի հոդվածը, գրերի ստեղծման ժամանակի մասին: Հեղինակը մոռանում է, որ Կորյունի «կարճ», «երկայն», «կրկնաւոր» տերմինների վրա հանդամանորեն կանգ է առել Գ. Սևակը: Այդքան մեծ ուշադրություն դարձնելով հայոց և հունարեն տառաձևերի մեջ եղած կապերին, հեղինակը կարող էր ավելի մեծ շափով օգտագործել հնագրությանը նվիրված հունարեն աշխատություններ⁷: Բաղդատելով հունարեն և հայերեն տառաձևերը, հեղինակը չի նշում անգամ, թե որտեղից է վերցրել V դ. հունարեն տառերը (տես էջ 59—60):

Բաղմաթիվ վրիպումներ անփութության հետևանք են: Ռուֆինոս գեղագրի անունը հայերեն բնագրերում արտահայտված է Հոսիանոս և ոչ Հոսիանոս ձևով (տես էջ 52, 62, հմմտ. էջ 69): Մեջ բերելով կազարյան ավետարանի հիշատակարանը, հեղինակը տարեթիվ նշանակող տառերի կողքին փակագծերում նշում է (886), մինչդեռ պիտի լինի 887, ինչպես և ասված է մի քանի տող վերև: Կ. Բ. Ստարկովան դավաճանելով իր սեռը, դառնում է Կ. Բ. Ստարկով (էջ 27): Հեղինակի և խմբագրի անուշագրության պատճառով վերջին գլուխը կորցրել է իր գլխահամարը (էջ 393), իսկ Մաստարայի արձանագրությունը, ղետեղված լինելով մի քանի տող վերև քան պետք է, բոլորովին խախտում է շարագրությունը (էջ 79), «գրչադիբ բառացի համապատասխանում է ելլոպական «manuscript» բառին՝ «հին ձեռագիր» իմաստով», — ասում է Ա. Արրահամյանը 367 էջում: Եթե անսպասման հարկավոր է դանել հայերեն գրչագրի ելլոպական դուզահեռը, ապա ավելի հարմար է նշել լատիներեն manuscriptum, քան ֆրանսերեն manuscript, իսկ ավելի լավ է առհասարակ հրաժարվել այդպիսի փորձից, սրովհետև manuscriptum կամ manuscript նշանակում է ձեռագիր և ոչ գրչագիր: 330 էջում հեղինակը հայտնում է, որ XIV—XV դդ. ներսես Մշեցու, Եսայի Նշեցու, Գրիգոր Տաթևացու և Հովհաննես Որոտնեցու ուսուցչապետության տարիներին Փլաձորը դառել էր մանրանկարչության խոշոր կենտրոն: Չենք կասկածում, որ պրոֆ. Արրահամյանին լավ ծանոթ է Փլաձորի համալսարանի փակման տարեթիվը՝ 1338 և որ Գրիգոր Տաթևացին այնտեղ երբեք չի գաստանդել:

* * *

Անփոփելիով մեր ասածը, դալիս ենք հետևյալ եզրակացության. «Հայ գրի և զրույթյան պատմությունը» մի ամբողջական աշխատություն է, որտեղ արժարծված են խոշոր և կարևոր հարցեր: Իր հարուստ նյութերը քաղելով անմիջապես ձեռագրերից, հեղինակը կարողացել է այդ հարցերի մի զգալի մասին

⁷ Տես օրինակ E. M. Thompson, An introduction to Greek and Latin Palaeography, Oxford, 1912. (որը համարվում է դասական ուսումնասիրություն), R. Devresse, Introduction a l'étude des manuscrits grecs, Paris, 1954 (պարունակում է հարուստ բիրտ լիոդրաֆիա) և այլն:

տալ բավարար, երբեմն բուրբուրովին նոր լուծում: Սակայն գրախոսվող գրքի մի շարք դրույթներ, որոնց անդրադարձանք սույն գրախոսականում, չեն կարող համարվել բնօրինակի:

Այնուհանդերձ, Ա. Աբրահամյանի «Հայ գրի և գրչության սլափունությունը» կգիմի յուրաքանչյուր գիտնական, որը կփորձի իր ուժերը հայոց հնագրության յժվար, բայց շնորհակալ ասպարեզում:

Կ. Ն. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ